

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ

Պ Ր Պ Տ Ո Ւ Մ Ի Փ Ո Ր Ջ Ե Ր

Ա. ՄԱՍ

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.

Կը հիանանք նախնեաց ձգած յիշատակարաններուն վրայ, անոնց ներդաշնակ համեմատութիւնները չենք դադարի ներքողել և կը ջանանք նոյն իսկ կապել տնոնց շինուածքներու դասաւորումի ձեւերը, առանց սակայն զանոնք իրապէս հասկնալու և կամ զանոնք վարող կանոններու իրական խորքին թափանցել ջանալու: Այնպէս որ այսօր ինքզինքնիս կը գտնենք այլանդակ արտայայտութեամբ շինութիւններու առջեւ, որոնց վրայէն շինող ճարտարապետը կարծէք ջանացած է վանել ներդաշնակութեան և գեղեցկութեան բոլոր հետքերը:

Այժմ, ոչ մէկ համաշխարհային և ոչ մէկ համեմատութիւն ունեցող շինութիւններ «Արդիական»ի պիտակին տակ կ'ողողեն քաղաքները և անոնցմէ կը վերցնեն ներդաշնակութեան բոլոր տուեալները և կամ իրենց տղեղ կառուցուածքովը կ'եղծանեն բնութեան տեսարանները:

ճարտարապետական այս տեսակ մը աղէտ մեր մէջ, կամայ կամաց կը մեռնէ իր տեւական ներկայութեամբը՝ գեղեցկին ու ներդաշնակին ճշմարիտ գաղափարը: Այլեւս գործանալի չենք գտներ և նոյնիսկ ներքին բոլոր մը իսկ չենք զգար ի տես ամէնէն արատուց շինութիւններու դիմաց: Անոնք այլեւս մեղի կը թռնին շատ բնական, և ասիկա այն աստիճան որ նոյնիսկ կը

մոռնանք նախնեաց համեմատութեանց և ներդաշնակութեան կանոնները: Արդարեւ, այժմ շատ քիչեր են որ կը հետաքրքրուին շինուածքի մը ներդաշնակ համեմատութիւններով և կը ջանան գործադրել նախնեաց կանոնները:

Հակառակ որ դարեր անցած են և քանի մը «քաղաքակրթութիւն»ներ իրենց արդիւնքներով կը ծանրաբեռնեն մեր միտքը, հակառակ մեր «արդիական»ութեան չենք կրնար մեր հիացումը զսպել ի տես հելլենական ճարտարապետութեան յիշատակարաններուն և ինքզինքնիս ձերբազատել առնոց հմայքէն: Եւ ամէն անգամ որ մեր ճաշակը դժուարութեան մը առջեւ կը գլուխ տուի, կը դառնանք միշտ հելլենական ճարտարապետութեան, հոն փնտռելու համար նոր ներշնչումներ, թէեւ անհասկնալի մեր նիւթապաշտ ուղիղներուն:

Եւ ասիկա տակաւին շատ երկար տտեն այսպէս պիտի ըլլայ, քանի մեր քաղաքակրթութիւնը կը ներշնչուի հելլենական փիլիսոփայութիւնէն և ճարտարապետութիւնը նիւթականացած փիլիսոփայութիւն է: Ան մարդու լոկ ապաստան մը, բնականութեան վայր մը տալու չի ձգտիր: ճարտարապետութիւնը չենքերու կերտուածքին մէջ կը ցոյացնէ փիլիսոփայութիւն մը և անոնց գիծերուն մէջէն կ'արտայայտէ տիեզերքի ներդաշնակութիւնը, շինուածանիւթին ընձեռած կարելիութիւններու սահմանին մէջ: ճարտարապետին արժէքը ճիշտ հոն է՝ որ նիւթական սահմանափակ տուեալներով յաջողի ներկայացնել տիեզերքի ներդաշնակութիւնը:

Այսօր, ճարտարապետներու մեծագոյն մասը գեղարուեստագէտ փիլիսոփաներ ըլլալէ աւելի գործի մարդիկ են և զիրենք հետաքրքրողը չենքի մը մէջ, առաւելապէս անոր նիւթական հասոյթներ կողմն է: Ասոր համար է որ այսօր շատ մը ճարտարապետներ չեն յաջողիր ներդաշնակ կերտուածք մը առաջ բերել, որովհետեւ իրենց կը պակսի փիլիսոփայական տուեալներ, ապա ուրեմն տիեզերքի ներդաշնակութեան հասկացողութիւնը:

Ներդաշնակութեան մեր պրպտումներուն անցնելէ առաջ, ուրեմն, պէտք է նախ ակնարկ մը նետել և վերադառնալ նախնեաց այս մարդին մէջ հաստատած կանոնները, որոնք անխալ կերպով տուեր են ներդաշնակութեան անջնջի օրինակներ: Ապա քննել թէ հայկական շինուածաձեւը որ աստիճան կը հետեւի այդ կանոններուն և կամ որպէս հին ճարտարապետութիւն ինքն իրեն թէ կանոններ հաստատած է: Որովհետեւ պէտք է ընդունել թէ հայկական ճարտարապետական կերտուածքը կը ներկայացնէ ներդաշնակ ամբողջութիւն մը երկրաչափական, երեւոյթապէս իրարու հակառակ զանգուածներու միջեւ:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՏԱԾԸ.

Ի՞նչ է ներդաշնակութիւնը:

Ներդաշնակութիւնը (harmonie) բաղդատութիւն մըն է զոր մեր հոգին կ'ընէ՝ աւելի քան մեր իմացականութիւնը, շարքի մը իւրաքանչիւր մասին միջեւ, և այն օրէնքը զոր ան կը հանէ այդ բաղդատութենէն՝ կը կոչուի կշռոյթ (rythme):

Երկու կամ աւելի վերաբերումներու (rapport) բաղդատութիւնը և անոնց համարժէքութեան և կամ նմանութեան (analogie) զգացումը կարելի է ներկայացնել, թիւերու սահմանին մէջ՝ հետեւեալ գրահաշուական հաւասարութեամբ.

$$\frac{a}{b} = \frac{c}{d}$$

երբ միջին երկու արժէքները, բ և գ հաւասար կ'ըլլան իրարու, կը ստանանք հաւասարական համեմատութիւն մը (proportion continue) որ է՝

$$\frac{a}{b} = \frac{c}{a}$$

Ժամպլիք⁽¹⁾ այս հաւասարութեան կը վերապահէ $\alpha\lambda\lambda\omicron\gamma\iota\alpha$ բառը. մինչդեռ նախորդ չորս տարբեր արժէքներու համեմատութիւնը կը կոչէ $\tau\omicron \alpha\lambda\lambda\omicron\gamma\omicron\nu$.

Նիքոմաք՝ Աղեքսանդր մեծի հօր բժիշկը՝ քննելով այս խնդիրը, հետեւեալ նկատողութիւնը կ'ընէ. «Երկու արժէքներու իրարու հանդէպ ունեցած յարաբերութիւնը կը կազմէ վերաբերում մը (rapport), մինչ՝ համեմատութիւնը (proportion) երկու վերաբերումներու միջեւ եղած առնչութիւնն է: Եւ թէ պէտք է առնուազն երեք եզրեր՝ համեմատութիւն մը կարենալ կազմելու համար »:

Բայց եթէ խնդիրը աւելի առաջ տանինք, պիտի տեսնենք թէ կարելի է միմիայն երկու եզրերով, ա և բ, շարունակական համեմատութիւն մը կազմել: Ապէս

$$\frac{a+b}{a} = \frac{a}{b}$$

ուր (a + b)ը մեզ պիտի տայ պակասած երրորդ եզրը:

Այս վերջին համեմատութիւնը շարունակական համեմատութիւններու ամէնէն յատկանշականն է որ գերմանացիք կը կոչեն «Die stetige Proportion»: Այդ համեմատութիւնը խօսքով սապէս կարելի է արտայայտել.

«Երկու արժէքներու գումարին և անոնցմէ մեծին միջեւ եղող վերաբերումը հաւասար է մեծ արժէքին և փոքր արժէքին միջեւ եղող վերաբերման »:

1. Ժամպլիք՝ նոր Պլատոնական յոյն փիլիսոփայ մը, որ դասախօսեց Աղեքսանդրիոյ մէջ Գ. դարուն. Ն. Բ.

Երկրաչափականորեն ներկայացնելով այս համեմատությունը՝ կրնանք ըսել, որ q գծի հատուածի մը և անոր երկու ուրիշ հատուածներու բաժանումին միջև գոյություն ունի հետեւեալ համեմատությունը

$$\frac{\text{հատուած ազ}}{\text{հատուած ար}} = \frac{\text{հատուած ար}}{\text{հատուած բզ}}$$

Այս այն համեմատությունն է որ Եւկլիտոս մեր երկրաչափութեան հայրը կը կոչէ.

« Բաժնել երկարութիւն մը միջին և ծայրագոյն համեմատութիւններու »:

Այս, թէ՛ զբաղաչուական և թէ՛ երկրաչափական տեսակետներէ, ամէնէն արմատականն անչափակից (asymétrique) բաժանումն է և զեղեցկագիտական ուսողութեան տեսակետէն ալ ամենէն կարեւորը:

$$\text{Առնենք՝ } \frac{m+p}{p} = \frac{m}{p} \text{ հաւասարութիւնը}$$

և բոլոր եզրերը բաժնենք p -ով և $\frac{m}{p}$ վերաբերումն ալ կոչենք p

$$\frac{m}{p} = p$$

այն ատեն վերի հաւասարութիւնը կը գրուի.

$$p^2 = p + 1$$

Այս արդէն երկրորդ աստիճանի հաւասարութիւն մըն է որ ունի երկու արմատներ.

$$\frac{1+\sqrt{5}}{2} = 1.618\dots \text{ և } \frac{1-\sqrt{5}}{2} = -0.618\dots$$

այս արմատներէն առաջինին թուական արժէքը, $1.618\dots$ կը կազմէ « չափ-թիւ »-ը և թուարանական արտայայտութիւնն է « ոսկեղէն հատած »-ին կամ « ոսկեթիւ »-ին (section d'orée, nombre d'or, χρυσόν τομή): Այս թիւը կը ներկայացնեն յունական Φ գիրովը.

$$\Phi = 1.61803398875\dots$$

Այս թիւը, միւս երկու հիմնական թիւերուն հետ՝

$$\pi = 3.14159265\dots \text{ և } e = 2.718281828\dots$$

կը կազմէ անչափելի թիւերու մէջէն այն

թիւերը որ կրնան մտնել կշռոյթի ձեւով շարքերու մէջ: Արդարեւ կրնանք գրել՝ $\Phi = \text{սահման}$

$$\sqrt{1 + \sqrt{1 + \sqrt{1 + \sqrt{1 + \sqrt{1 + \dots}}}}}$$

և կամ

$$\Phi = 1 + \text{սահման } \frac{1}{1 + \frac{1}{1 + \frac{1}{1 + \frac{1}{1 + \dots}}}}$$

այս ձեւով կարելի է գրել եքսփոնանսիէլ e ն

$$e = 1 + \frac{1}{1} + \frac{1}{1 \times 2} + \frac{1}{1 \times 2 \times 3} + \frac{1}{1 \times 2 \times 3 \times 4} + \dots + \frac{1}{n!}$$

և կամ

$$e = 2 + \frac{1}{1 + \frac{1}{2 + \frac{1}{1 + \frac{1}{1 + \frac{1}{4 + \frac{1}{1 + \frac{1}{1 + \frac{1}{8 + \frac{1}{1 + \dots}}}}}}}}}}$$

մինչդեռ չըջանակը չափող- π ն հաւասար է

$$\pi = \frac{2^2 \times 4^2 \times 6^2 \times 8^2 \times \dots}{3^2 \times 5^2 \times 7^2 \times 9^2 \times \dots}$$

որ կարելի է գրել շարքի (serie) ձեւին տակ սապէս.

$$\frac{4}{\pi} = 1 + \frac{1}{2 + \frac{1}{3^2}} + \frac{1}{2 + \frac{1}{5^2}} + \frac{1}{2 + \frac{1}{7^2}} + \frac{1}{2 + \frac{1}{9^2}} + \dots$$

Չեմ ուզեր աւելի ծանրանալ Φ -ի, π -ի և e -ի ուսողական յատկութեանց վրայ ձանձրացուցիչ չըլլալու համար: Միայն առ ի հետաքրքրութիւն նշանակեմ քանի մը յարաբերութիւններ Φ -ին, π -ին և e -ին միջև:

$$\Phi = 1 + \frac{1}{\Phi} ; \Phi = 1.618 ; \frac{1}{\Phi} = 0.618 ;$$

$$\Phi^n = \Phi^{n-1} + \Phi^{n-2} ;$$

$$\frac{4}{\pi} = 1.273 \quad \sqrt{\Phi} = 1.272 ;$$

$$\left(\frac{\pi}{4}\right)^2 = 0.617 \quad \frac{1}{\Phi} = 0.618 ;$$

$$1 + e^{\pi \sqrt{-1}} = 0 ;$$

Այս վերը ըսածներէս կը տեսնուի որ Φ -ի շարքը կը ներկայանայ թէ՛ թուաբանական և թէ՛ երկրաչափական յառաջատուութեան մը բնոյթով, այս շարքին մէջ

$$1, \Phi, \Phi^2, \Phi^3, \dots, \Phi^n$$

իւրաքանչիւր եզր հաւասար է իրմէ երկու յառաջաւորներու գումարին

$$\Phi^n = \Phi^{n-1} + \Phi^{n-2}$$

Այս յատկութենէն յառաջ պիտի գայ այն՝ որ այս շարքին եզրերու համեմատական երկարութիւնները պիտի ունենան զծագրական և երկրաչափական նշանակելի յատկութիւններ: Այսպէս օրինակ՝ երկու երկարութիւններ, որոնց վերաբերումը հաւասար է Φ -ի, պարզ կարկինով մը թոյլ կու տան գումարով կամ բարձումով կազմելու երկրաչափական ամբողջական շարքը:

Φ ն տուող հաւասարութիւնը՝

$$\frac{m+p}{m} = \frac{m}{p}$$

կոչուեցաւ « Աստուածային համեմատութիւն » Պլոնեացի վանականէ մը, ֆրաւ Լոռա Բալիոյի տի Պորիոյ, որ այս մասին իր գրեց նշանաւոր գիրք մը « Divina Proportione » (տպ. Վենետիկ 1509-ին), այժմ շատ հազուագիւտ: Այս գիրքը նկարագրուած է Լէօնարտոյ տա վիճիւնէն:

Արդէն շատոնց Եւլիդայի ծանօթ էր համեմատութեանց աստուածային տուրք մը ըլլալը: Եւ Պիթագորեան տեսութիւնը երաժշտական ներդաշնակութեան մասին կը հիմնուի միմիայն ուսողական համեմատութեանց վրայ:

Պղատոն, Թարանդացի Արսիդաս, Եւտոքոս, Միոնիաէս, Լեօֆրանոր, Նիքոմաք, Զմիւռնիացի Թէօն կը խօսին և կը գործածեն համեմատութիւնները և կու տան անոնցմէ տասը տեսակներ:

Համեմատութիւններու այս խնդիրը խորացնելով՝ նախնիք հասան բնագիտական կարեւոր տուեալներու, որոնք հիմը կը կազմեն ներդաշնակութեան և կշռոյթին, ապա ուրեմն տիեզերքի կազմութեան:

Պղատոն « Թիմէ »-ի մէջ արդէն կը խօսի կշռոյթի (rythme) և « տիեզերքի Ոգի »-ի վրայ, ուր Պիթագորեան չորրորդութիւնը⁽²⁾

2. Պիթագորասի հաստատած Չորրորդութիւնը (tetractys) կը նկատուէր այնքան կարեւոր և սրբազան՝ որ Պիթագորեան երգումը անոր անունը կ'ըլլար.

ὄν, μα τὸν ἀμέτερον, φύχα
παράδοντα τέτρακτον παγάν
ἀενάο φῶσεως ριζώμα τ'ἔχουσιν

(« Եւ, կ'երդնում յանուն անոր որ մեզ փոխանցեց չորրորդութիւնը, ահա և արմատը յաւիտեանական բնութեան »).

Չորրորդութիւնը կը կազմէ ստալին չորս թիւերու շարքը 1, 2, 3, 4 անուած որպէս շարք և որպէս ամբողջութիւն՝ $1 + 2 + 3 + 4 = 10$:

Տասը (décade՝ կը ներկայացնէ թէ՛ Տիեզերքը և թէ՛ եռանկիւնային չորրորդ թիւը.

$$\begin{array}{ccccccc} & & & & 1 & & \\ & & & & & 1 & \\ & & & & & & 1 \\ & & 1 & & 1 & & \\ & 1 & & 1 & & 1 & \\ 1 & & 1 & & 1 & & 1 \end{array}$$

Ասիկց գատ 1, 2, 3, 4-ի շարքը կու տայ ներդաշնակ յառաջադրութիւնը ուր 4ին և 2ին, 2ին և 1ին վերաբերումները կը ներկայացնեն octave (ὀκτὰ πاصὼν) ու 3ին և 2ին վերաբերումը « quinte »-ը (ὀκτὰ πεντε) և 4ին և 3ին վերաբերումը quartet:

Տասնէն իր կէսին անցնելով կ'ունենանք հոգեկաւոր « հնգեակ »-ը որ կը նկատուի Ափրոդիտի թիւը, որպէս արարչութեան թիւը, ΓΑΜΟΣը: Պիթագորեաններու ըով 5ը կը նկատուի ստալին զոյգ թիւին (իզական) և կատարեալ անզոյգ թիւին (արական) գումարը $2 + 3$:

Հնգեակը՝ քանի որ արարչութեան թիւը կը ներկայացնէր, կը նկատուէր նաեւ որպէս ամբողջութեան և ներդաշնակութեան թիւը: Պղատոնի համար զեղեցկութիւն, ներդաշնակութիւն, ամբողջութիւն և մարդկային մարմին իրարու համարժէք են: Ան « Թիմէ »-ի մէջ կը գրէ.

կը ստանայ իր բնազանցական ամբողջ կա-
րեւորութիւնը:

ՆԵՐՈՒՆԱԿԱՆ ԳԻՏՈՒՆԸ:

Քանի որ ներդաշնակութիւնը տիեզերքի
օրէնքն է և այդ ներդաշնակութիւնը ար-
տայայտողը համեմատութիւն մըն է, «սու-
կեղէն հատած»ը, որ կը ներկայացուի
1.618 թիւով, շատ մը գիտնականներ կատարած
են պրպտումներ տեսնելու համար թէ այս
թիւը իրապէս արտայայտուած է տիեզերքին
մէջ:

Քէրէր ազդուած Բաշիլիի և Լէոնարտոյ
տա Վինչիի գրութիւններէն կը գտնէ զինքը
անմահացնող, տիեզերական օրէնքները:
Յիսինկ, Լուտտիկ Քուսթի, Թոմա Քուք
եւայլն, քննելով մարդկային մարմինին գա-
նազան մասերու իրարու հետ ունեցած հա-
մեմատութիւնները՝ հոն կը գտնեն «սուկեղէն
հատած»ի համեմատութիւնները: Նոյն այս
համեմատութիւնը կը գտնուի խեցեղէննե-
րու, ծաղիկներու և երկրագունդի ցամա-
քամասերու միջև (Ալէքս Տենեբէտ):

Յիսինկ (Aesthetische Forschungen, 1855)
կը հաստատէ և կամ աւելի ճիշտ կը վե-
րագտնէ ներդաշնակութեան կանոնը:

«Որպէս զի երկու մասի բաժնուած ամ-
բողջորթն մը, ձեռի գեղեցկորթն մը ներ-
կայացնէ՝ պէտք է որ երկու բաժանումներուն
պզտիկիկ և մեծիկ միջև գտնուի նոյն հա-
մեմատորթնը որ կը գտնուի մեծ բաժանումիկ
և ամբողջորթն միջև»:

Այս արդէն կը գտնուի Բաշիլիի «Աս-
տուածային համեմատութիւն» կոչած հաւա-
սարութեան մէջ:

«Յետոյ, այս մարմինն մէջ ուր կը խառնէ և ուր կը
վազէ կեանքի հոսանքը անդադար, աստուածները կը
մտնեն անմահ սգի շարժումը»:

Թիւ հինգը, երկրաչափական պատկերով կը ներկայա-
նայ հնգաթեւ աստղի ձեւին տակ. այս էր Պիւթագո-
րեաններու գաղանի նշանը: Այս աստղը կը ներկայացնէ
միջոցառումը:

Այս կանոնը կ'իրագործուի մարդկային
մարմնոյ, կենդանական և բուսական աշ-
խարհին, երկրամասերու բաժանումին և
երաժշտութեան մէջ՝ ինչպէս նաեւ հիլե-
նական ճարտարապետութեան մէջ, ի մաս-
նաւորի Բարթէնոնի սարքաւորումներէ մէջ:

Արդէն շատոնց Վիթրուվ ըսած էր. «Հա-
մաշափութիւնը շինուածքի մը վրայ, կը
կայանայ զանազան բաղկացուցիչ մասերու
իրարու հետ և ամբողջութեան հետ ունեցած
համեմատութեան, որպէս է մարդու մար-
մինին վրայ: Ան առաջ կու գայ հիլեոններու
ըսած անալոկիայէն (համեմատութիւն): Այս
համաշափութիւնը կանոնուած է այն ինչ
որ յոյները կ'ըսեն ποσοτης (թիւ)»:

Երբ շէնքի մը իւրաքանչիւր մասը պատ-
շաճ կերպով համեմատուած է, բարձրու-
թիւնը լայնքին, լայնքը երկարութեան հետ,
և երբ այս բոլոր մասերը կը համեմատուին
ընդհանուր համաշափութեան մը մէջ՝ շէնքին
ամբողջութեանը հետ, կը ստանանք ներ-
դաշնակ շինութիւն մը որ կը կոչեն «հա-
փակցութիւն» (eurythmies):


ճարտարապետը իր շէնքը պիտի շինէ
ձեւերը և զանգուածները իրարու հետ բաղ-
դատելով և իրարու քով վարպետօրէն հա-
րելով, որպէս զի թէ մանրամասնութիւննե-
րէն և թէ ամբողջութիւնէն դուրս գայ
միեւնոյն կշռոյթը, միեւնոյն համեմատու-
թիւնը: Երբ այս պայմանը կը լրացնէ
շինուածքը պիտի կազմէ «համանուագ» մը
որ պիտի թրթռացնէ երգի մը նման՝ միջոցը:
Այն ատեն է որ պիտի կարենանք ըսել թէ
զայն կերտող վարպետը ճարտարապետ
մըն է:

ՆԵՐՈՒՆԱԿԱՆ ԳԻՏՈՒՆԸ:

Ժորժ դարու կէսին է որ կը սկսին նախ-
նեաց «ներդաշնակ գիծ»ի (tracée har-
monique) կանոններուն պրպտումները Յի-
սինկի, Վիտել-ը-Տիւքի և Շուազիի կողմէ:
Աւելի վերջը այս պրպտումներուն մասնակ-

ցեցան ամերիկացի Հէմպիճ⁽³⁾, գերմանացի
ճարտարապետ Մէսսէլ⁽⁴⁾ և Նորվեկիացի
Լունտ⁽⁵⁾ և նոր տուեալներ բերին իրենց
«ներդաշնակ գիծ»ի նոր գրութիւններովը:
Վիթրուվի գրութիւններուն ուշադիր
քննութեամբ, Պլատոնական և նոր Պլա-

Հէմպիճ՝ իր «Dynamic Symmetry»
գիրքովը հեղին և գոթական շէնքերու
յատակագիծները քննելով կ'եզրակացնէ
«Տինամիք ուղղանկիւն քառանկիւն»ի գրու-
թիւնը: Ան «Տինամիք» կը կոչէ այն քա-
ռանկիւնները, որոնց կողմերու համեմա-



Գորական Եկեղեցիի մը ներդաշնակ
գիծը ըստ Մէսսէլի գրութեան:

Փարիզի Նոթր Դամի ճակատը.
ներդաշնակ գիծ ըստ Լունտի
գրութեան:

Եգիպտական դամբարան մը
Փ համեմատութեամբ գծուած քառակու-
սիի մը մէջ. ըստ Հէմպիճի գրութեան:

տոնականներու համեմատութեանց և ներ-
դաշնակութեան մասին ունեցած ըմբռնում-
ներուն լոյսին տակ՝ պրպտողները հասան
որոշ եզրակացութեանց:

տութիւնները անարմատական, անհամաչափ
(irrationnelle) են, ինչպէս

$$\sqrt{2}, \sqrt{3}, \sqrt{5} \text{ և կամ } \frac{1+\sqrt{5}}{2} \text{ը:}$$

Մէսսէլ իր կարգին կը գրէ.

«ճարտարապետական յատակագիծներու
պատրաստութիւնը, սկիզբէն սկսած մինչեւ
միջին դարու վերջը, թուարանական բնոյթ
մը ունենալէ աւելի երկրաչափական է ընդ-

3. I. Hambidge: Dynamic Symmetry, Yale
University Press.

4. Moessel: Die Proportion in der Antike und
Mittelalter, München.

5. Lund: Ad Quadratum, 1921. Քրանսերէն Թարգ-
մանութիւնը հրատարակուած Morancé-ի:



հանրապէս: Անոնք կը սերին շրջանակի մը անկիւնային կանոնաւոր բաժանումներէն: Եւ ընդհանրապէս այնպէս կ'երեւի թէ հին վարպետները շրջանակը տանի կը բաժնէին »:

Եւ Մէօսէլ իր ներդաշնակ գիծը կը պատրաստէ տանի բաժնուած շրջանակի մը նախագիծին (canevas) վրայ:

« Ներդաշնակ գիծ » ի այս ձեւը կը համապատասխանէ Վիթրիւվի նկարագրած հելլենական թատրոններու դասական գծադրութեան ձեւին « շրջանակի մը մէջ երեք քառակուսիներ գծելով »:

Մինչդեռ Լունտ կը գործածէ զուգարթ (isocelle) եռանկիւններու ճառագայթաւոր « տիակրամ »-ը:

Հոս դրած պատկերս կու տայ այս երեք դրութիւններէն նմոշներ:

Այս երեք դրութիւններն ալ կրնան արդարացուիլ և համաչափութեան կանոններու պրպտումին մէջ պէտք են նկատի առնուիլ

յաջորդաբար, քանի որ մէկը կամ միւսը, կը տեսնենք թէ համապատասխան շինութիւններ կը գտնեն: Մէօսէլի դրութիւնը մասնաւորաբար կը յարմարի թէ հելլենական և թէ միջին դարու ճարտարապետական կերտումներու, իսկ Հէմպիլի դրութիւնը առաւելապէս հելլենական շինութիւններու:

« Ներդաշնակ գիծ » ի դրութեան շնորհիւ, ճարտարապետը ոչ միայն վստահաբար կը գտնէ յատակագիծի ամէնէն յարմար համեմատութիւնները և ներդաշնակութիւնը, այլ նաեւ ուղղակի նոյն նախագիծին շնորհիւ կը ստանայ նաեւ շէնքին ճակատի համեմատութիւնները ուղղակի կապուած յատակագիծի համեմատութեանց: Ասոր մէկ օրինակը պիտի գտնենք աւելի հեռուն, երկրորդ մասին մէջ, երբ պիտի քննենք Գառնիի տաճարին ներդաշնակ գիծը:

ճարտ. Ս. ՃԵՎԱՆՆԻՐՃԵԱՆ

(Շարունակելի)

Բ Ո Ղ Ո Ք

Չրդիւնացար ոչրեմն, ո՛վ սիրտ իմ տրկար ոչ երեր,
Կեանքի վրեւ խոյանքիւն արեւներով ծանրաբեւե,
Չրդիւնացար միւնէր իսկ սիրոյ քաղցրիկ հարուածիւն,
Ամեն ճայնէ դողացիր իրբեւ մանուշկ նորածիւն:

Քեզ կ'ոչրանաւ սիրտ երկչոտ, մաւրս լեղար դռն երբեր,
Հերոսական երգերոշս պոռթկումն անգամ բոցաշէկ
Քեզ պատճառեց սարսուռ, վախ, բռնի հանեց քեզ շարունակ,
Պայքարներս դողացիր գերդ մըսակոյտ աներակ:

Ըգրեզ խոցեց միւնէր իսկ ամեն կրճոշ խօսք ոչ բառ,
Արշաւներոշս ծանական նահանգեցիր վատարար.
Առանց քեզի ալ կրնաւ սիրել, երգել, պայքարիլ,
Երակներոշս մեջ երե մընայ արեւն մի կարիլ:

Ֆիլատեիֆիա, 3 Մարտ 1947.
Հիւանդանոցին մէջ:

ՅԱՎՈՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կեղծ Գիտնեսիոս Արիստագացւոյն անվաւերական մէկ թուղթն է հետեւեալ բնագիրը զոր կը հրատարակենք, քաղելով Ս. Ղազարու Մատենագարանին ճառընտիր Գ. ձեռագրէն⁽¹⁾ բաղդաստելով զայն ուրիշ երկու և ԻԹ ճառընտիրներուն մէջ⁽²⁾ զըտնուող օրինակներուն և Սրուանձատեանցի 1874ին հրատարակած Մշոյ Ս. Կարապետի ձեռագիր « Աստուածարանութիւն Ս. Գիտնեսիոսի », օրինակին հետ:

Կեղծ Գիտնեսիոսի վերագրուած և Տիտոսի (Պօղոս առաքեալի աշակերտ), ուղղուած այս թուղթին նիւթն է հետեւեալը: Առաքեալները վերին ազգեցութեամբ ակնթարթի մէջ կը հաւաքուին Երուսաղեմ Ս. Կուսին ժողովուրդի գիրենք կը քաջալերէ յայտնելով իր նշումը, հրաժեշտի ողջոյնը կու տայ անոնց և իր ամենամաքուր հոգին կ'աւանդէ: Առաքեալները անոր կուսական անարատ մարմինը կը թաղեն Գեթսեմանի պարտէզին մէջ: Երեք օր անընդհատ գերեզմանին վրայ կը լսեն հրաշալուր երկնային մեղեդիներ, և ապա լուծուին: Առաքեալներէն մին հոն գտնուած չըլլալուն և վերջին անգամ մըն ալ Ս. Կոյսը տեսնել չկարենալուն համար, կը խնդրէ իր առաքելակիցներէն որ գտնէ Անոր անթառամ մարմինը կարենայ գերեզմանին մէջ տեսնել: Զիջանելով անոր պաղատանքին կը բանան գերեզմանը, և ահա ամենամեծ զարմանքով զայն դատարկ

կը գտնեն, և խորհրդածելով կը հետեւցնեն որ ան երկինք փոխադրուած ըլլայ օրհնեղու հրեշտակներու ձեռքով ճիշտ այն պահուն, երբ թաղումէն երեք օր վերջ՝ անոնց հոգեզմայլ ներդաշնակութիւնները դադրած էին:

Այս պատմութեան ստոյգ մասն է Ս. Կուսին մարմնով երկինք վերափոխուիլը, զոր տիեզերական Եկեղեցին յարատեւ տօնակատարութեամբ կը պատուէ տարուէ տարի: Իսկ ներկայացուած մնացած զէպքերը և պարագաները յերիւրուած ըլլալու երեւոյթ ունին իրենց վիպային հանգամանքով: Առ Տիտոս այս թուղթով զբաղած են ցարդ Գարեգին Վ. Սրուանձատեանց⁽³⁾, որ առջին անգամ զայն պարզապէս հրատարակեց 1874ին, քաղելով Մուշի Ս. Կարապետ վանքի « Աստուածարանութիւն Գիտնեսիոսի Արիստագացւոյն » ձեռագրէն:

Ֆէթթէր ուսումնասէրը, Փարիզու Ազգային Մատենագարանի պատկանող ԺԲ դարու (1196) գործ « Տօնական » թիւ 44 հայ ձեռագրի մէջ հանդիպելով անոր, և կարծելով որ հրատարակուած չէ, աւելորդ միայն գերմանարէն թարգմանութիւնը 1887ին հրատարակեց⁽⁴⁾: Ֆէթթէր կ'ըսէ թէ հայերէնը յոյն բնագրէ մը թարգմանուած է, ինչ որ յայտնի կը տեսնուի լեզուէն և բառերու կազմութիւնէն: Հայերէն այս թարգմանութիւնը ասորաբանութեան հետք չունենալուն պատճառաւ « Հայկական թարգմանական մատենագրութեան ամենէն կանուխ շրջանին չի վերաբերիր⁽⁵⁾ » կ'եզրակացնէ:

Ֆէթթէր կը համարի զայն Կեղծ Գիտնեսիոսի հեղինակութիւն, և այս անտարապետութիւն է, կ'ըսէ, վասն զի նոյն հեղինակին « Աստուածային Անուններու վրայ » գրութեան Գ. գլխուն մէջ Θεοδόχοι σῶμα (աստուածընկալ մարմին), բացատրութիւնը՝ որ

1. ճառընտիր Գ, թիւ 512, էջ 881-883.
2. ճառընտիր Ե, թիւ 1553, թղ. 351 և 353 ա.
3. ճառընտիր ԻԹ, թիւ 653, էջ 312-313.
4. Theologische Quartalschrift, 1887, pp. 133-138.
5. Հայկական Աշխատասիրութիւնը Ֆէթթէրի, Վիեննա 1895, էջ 13.